

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Ա Ր Ձ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ Ի

27-րդ դեկտեմբերի 2017 թ.

Ք. Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2017 թվականի դեկտեմբերի 27-ին Ժ.11⁰⁰-ին կայանալիք
ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. Մարզի համայնքների 2017թ. Դեկտեմբերի 27-ի դրությամբ սեփական եկամուտների կատարողականների մասին
Ձեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
2. ՀՀ Տավուշի մարզում 2017թ. ընթացքում իրականացված ծրագրերի մասին
Ձեկ. Գ. Հարությունյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի վարիչ
3. Մարզում 2017թ. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների ամփոփում
Ձեկուցող՝ Վ. Սուրոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ
4. Մարզի առողջապահական հիմնարկների աուդիտի արդյունքների ամփոփում
Ձեկուցող՝ Ն. Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ
5. 2017թ. կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հետ տարվող աշխատանքների մասին
Ձեկուցող՝ Հ. Քոչարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
6. ՀՀ Տավուշի մարզում 2017թ. ընթացքում կրթության ոլորտում իրականացված և 2018թ. իրականացվելիք ծրագրերի մասին
Ձեկուցող՝ Կ. Նազարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
7. Այլ հարցեր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

27.12.2017թ.

ք.հզևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանը.

Մարզխորհրդի 25 անդամներից ներկա էին 24-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզի համայնքների ղեկավարները և խոշորացված համայնքների վարչական ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, մարզի առողջապահական և կրթական հաստատությունների տնօրեններ:

1. Մարզի համայնքների 2017թ. Դեկտեմբերի 27-ի դրությամբ սեփական եկամուտների կատարողականների մասին

Ձեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2017 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 3413.9 մլն. դրամ, որը կազմում է տարեկան նախատեսվածի 96.9 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 850.6 մլն. դրամ կամ կատարվել է 90.7 %-ով: 2016 թվականի տարեկան ցուցանիշների համեմատությամբ ս/թ դեկտեմբերի 27-ի դրությամբ սեփական եկամուտները ավել են հավաքագրվել 132.3 մլն. դրամով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 27-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2017 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 182.7 մլն. դրամ, հավաքագրվել է 160.1 մլն. դրամ կամ կատարվել է 87.6 % - ով, 2016 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 10.8 մլն. դրամ,

- գույքահարկ - 2017 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 329.9 մլն. դրամ, հավաքագրվել է 330.2 մլն. դրամ կամ կատարվել է 100.1 %-ով, 2016 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 31.2 մլն. դրամ,

- տեղական տուրքեր – 2017 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 44.4 մլն. դրամ, հավաքագրվել է 38.9 մլն. դրամ կամ կատարվել է 83.0 %-ով, 2016 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 5.5 մլն. դրամ,

- գույքի վարձակալությունից եկամուտներ – 2017 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 108.2 մլն. դրամ, հավաքագրվել է 84.6 մլն. դրամ կամ կատարվել է 78.2 %-ով, 2016 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 362.2 հազար դրամ,

- տեղական վճարներ – 2017 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 218.2 մլն. դրամ, հավաքագրվել է 194.5 մլն. դրամ կամ կատարվել է 89.1 %-ով, 2016 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 125.2 մլն. դրամ:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է ապահովել 2017 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը, քանի որ հաշվված օրեր են մնացել տարեվերջին:

Համայնքների ղեկավարներին առաջարկվել է 2018 թվականի տեղական բյուջեների ընդունման ընթացքում ապահովել սեփական եկամուտների աճ 20-25 %-ով, որը հնարավորություն կտա ավելացնել բնակչության 1 շնչին ընկնող սեփական եկամուտների գումարը և հավասարվել հանրապետական միջին ցուցանիշին:

Սույն թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ մարզի 24 համայնքներից 17-ը ավագանիների կողմից հաստատված 2018 թվականի տեղական բյուջեները ներկայացրել են մարզպետարան:

Մարզի Իջևան, Այգեհովիտ, Սևքար, Դիտավան, Կիրանց, Գանձաքար համայնքները 2017թ տեղական բյուջեները կատարել են 100 %-ով, Խաշթառակ համայնքը բացառությամբ գույի վարձակալական վճարների սեփական եկամուտները կատարել է 100 %-ով:

Այրում համայնքը վերջին ժամանակահատվածում բավականին աշխատանքներ է կատարել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, բացառությամբ հողի հարկի գույքի վարձակալական վճարների մնացած հարկատեսակների գծով կատարել է 100 %:

Ձեկույցը ընդունվեց ի գիտություն:

2. ՀՀ Տավուշի մարզում 2017թ. ընթացքում իրականացված ծրագրերի մասին Ձեկույցող՝ Գ. Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի վարիչ

2017 թվականին Տավուշի մարզում ինչպես ՀՀ պետական բյուջեի, այնպես էլ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, համայնքային բյուջեների, մասնավոր ներդրողների և անհատ բարերարների միջոցներով իրականացվել են մեծածավալ աշխատանքներ ուղղված մարզի սոցիալ – տնտեսական զարգացմանը:

Նշված ծրագրերը ուղղվել են գյուղատնտեսության, զբոսաշրջության, ենթակառուցվածքների, քաղաքաշինության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի, արտադրական ձեռնարկությունների և սպասարկման ու ծառայությունների որակի բարելավմանը:

2017թ. կապիտալ շինարարության գծով իրականացվել է շուրջ 20.531 մլն.դրամի աշխատանքներ, այդ թվում՝

Կրթական օբյեկտների շինարարություն - 963.149.

Մշակութային օբյեկտների շինարարություն -158.477

Առողջապահական օբյեկտների շինարարություն -144.110

Մարզական օբյեկտների շինարարություն - 165.185

Ճանապարհաշինություն -1260.814

Բնակարանաշինություն -1248.405

Գազաֆիկացում -5.000

Այլ օբյեկտներ -10586.122

Ճարտարապետության բնագավառ -203.000

Զբոսաշրջություն, սպասարկում -666.500

Խմելու ջրամատակարարում -1054.600

Ոռոգում - 140.715

Համայնքներում ազգաբնակչության կողմից իրականացված

շինարարական տարբեր բնույթի ներդրումներ - 3638.500

Մարզի համայնքների ֆոնդային բյուջեով իրականացված ներդրումներ - 230.500

ընդամենը՝ 20.531.078.480

Տարվա ընթացքում իրականացվել է շուրջ 3057 մլն.դրամի գյուղատնտեսական ծրագրեր/«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի և ՄԶԾ-ի գյուղատնտեսական ծրագրերը, «Այնտական բյուջեի միջոցներով ծրագրեր, մասնավոր ներդրողների կողմից իրականացվող ծրագրեր և այլն:

Այլ ներդրումային ծրագրերով իրականացվել են ավելի քան 3,2 մլրդ.դրամի աշխատանքներ, որոնցից են /Դիլիջանի գարեջրի գործարանի կառուցման, ԻԴԵԱ հիմնադրամի կողմից, ԵՄ և «Կառավարության միջոցներով իրականացվող և այլն/

2017թ. «Կառավարություն է ներկայացվել 20 ներդրումային ծրագրի առաջարկ որից 12-ը հավանության է արժանացել, իսկ երկու ծրագիր վարկավորվել/Իջևանի բազմաբերք ելակի արտադրության ծրագիրը և Կոթիի մսի վերամշակման արտադրամասի ընդլայնման ծրագիրը:

Մնացած ներդրումային ծրագրերը քննարկվել են Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մասնագետների հետ, որոնցից մի քանիսը կֆինանսավորվեն 2018 թվականին:

2018թ. կշարունակվի «Տավուշտեքստիլ» ՍՊԸ-ի ընդլայնման աշխատանքները/մասնավոր/

Տավուշի մարզի Ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում ծրագիրը /ԵՄ,«Կառ./, Դիլիջան համայնքի լուսավորության համակարգի, աղբահանության, ներհամայնքային տրանսպորտային համակարգերի ձևավորման, դպրոցներում բարձր տեխնոլոգիաների գիտելիքների տարածման և բնապահպանական ծրագիրը /«տարածքային զարգացման հիմնադրամ / :

Զբոսաշրջության ոլորտը մեզ համար գերակա ճյուղ է և սա ամրագրված է նաև Տավուշի մարզի զարգացման ռազմավարության մեջ: Այս բնագավառի վերաբերյալ կան նաև «Կառավարության կողմից տրված բազմաթիվ հանձնարարականներ: Բնական է, որ մենք, որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի, տարվա ընթացքում որոշակի աշխատանքներ ենք կատարել: 2017-ը բավականին բովանդակալից էր այդ առումով: Տուրիզմը զարգացնելու կարևոր նախապայմաններից մեկը մարզի ճանաչելիության բարձրացումն է: Համագործակցելով մի շարք տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ, անցնող տարում Բերդի տարածաշրջանում կազմակերպվել է «Մեղրի և հատապտուղների»

փառատունը, Ենոքավանում՝ «Հայբույս», Ջորականում՝ «Հազար տարվա գյուղամեջ», իսկ Դիլիջանում՝ «Գորգերի» փառատունները, որոնց իրականացման գործընթացներում մեծ է եղել նաև համայնքների ղեկավարների մասնակցությունը: Ինչպես տեսնում եք մարզի յուրաքանչյուր տարածաշրջանում մենք ունենք ավանդական դարձած միջոցառումներ, որոնք տարեցտարի ավելի են ընդլայնվում՝ նպաստակ ունենալով բարձրացնել մարզի ճանաչելիությունը և նպաստել տուրիզմի զարգացմանը: Զբոսաշրջության ոլորտում շատ կարևոր է համարվում նաև տեղեկատվական կենտրոնների հիմնումը: Սրանք այն օղակներն են, որոնց միջոցով աշխարհին, զբոսաշրջիկին, մարդուն, ով ուզում է իր հանգիստը կազմակերպել, կարող են ներկայացնել Տավուշի մարզը իր բոլոր հնարավորություններով: 2017 թվականին այդպիսի 2 կենտրոն է հիմնվել մարզում: Ենոքավան համայնքում՝ USAD-ի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրով՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, որը հիմնականում միտված է գյուղական տուրիզմի զարգացմանը: Նշված բոլոր ոլորտներով կատարված աշխատանքները ամփոփվում են և առաջիկայում Տավուշի մարզում 2017թ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կուղարկվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և կտեղադրվի կայքում:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն

3 . Մարզում 2017թ. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների ամփոփում

Զեկուցող՝ Վ. Սուրբյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղը, ուստի մարզի զարգացման ռազմավարությունը կապում ենք այդ ճյուղի հետ: Մարզը ունի հնարավորություններ թե նոր աշխատատեղերի ստեղծման, թե բիզնես միջավայրի զարգացման համար:

Մարզում գյուղատնտեսությամբ են զբաղվում 25 հազ գյուղացիական տնտեսություններ:

Վերջին տարիներին գյուղատնտեսության տարբեր ճյուղերում բացվել են շուրջ 2400 աշխատատեղեր:

Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող - 25588.4 հա

բազմամյա տնկարկներ - 1902.2 հա, որից՝

խաղողի այգիներ - 1198.1հա,

պտղատու այգիներ - 704.1 հախոտհարքներ

արոտավայրեր - 63065.6 հա

այլ - 10805.4 հա

Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան

բազմամյա տնկարկներ - 2030.8 հա, որից՝

խաղողի այգիներ - 158.9 հա,

պտղատու այգիներ - 1871.9 հա

25588.4 հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2017թ. ցանքի տակ է դրվել 8567 հա:

2017թ. արտադրվել է .

- Հացահատիկ, հատիկաբերեղեն – 13167 տոննա
- Բանջարեղեն – 8620 տոննա
- Բոստան – 1439 տոննա
- Կարտոֆիլ – 13623 տոննա
- Պտուղ – 11821 տոննա
- Խաղող – 9804 տոննա
- Խոտ – 58000 տոննա

Ժամանակին և անկորուստ կատարվեց խաղողի բերքահավաքը: Արտադրված 9804 տոննայից **1 կգ-ը 130 դրամով մթերվեց 5106 տոննա խաղող /2016թ. 4141 տոննա/,** այդ թվում՝

- <<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 3525 տոննա
- <<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դերբեղավանի գինու գործարան-820 տոննա
- <<Իջևանի գինու և կոնյակի գործարան>> ԲԲԸ – 561 տոննա
- <<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 200 տոննա

Մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է **726.4 տոննա պտուղ և հատապտուղ ու բանջարեղեն /2016թ. 572 տոննա/,** որից.

- Իջևանի գինու, կոնյակի գործարան ԲԲԸ – 388 տոննա
 - <<Էկոգարդեն>> ՍՊԸ /գ. Այգեձոր/ – 302 տոննա
 - <<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ /գ. Ջուլջան/ – 34.8 տոննա
 - <<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 1.6 տոննա
- Բացի մթերումները շուրջ 514 տ պտղից չիր է պատրաստվել: Շուրջ 500 տոննա դեղձ արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն:

2017թ. աշնանը մարզում կատարվել է 3020 հա աշնանացան:

Մարզի համայնքներում առկա է.

- Խոշոր եղջերավոր – 31213 գլուխ
- այդ թվում՝ կովեր – 14042 գլուխ
- Խոզեր – 15574 գլուխ
- Ոչխարներ և այծեր – 16028 գլուխ
- Մեղվաընտանիքներ – 20449 հատ
- Թռչուններ – 191391 թև

Ֆինանսական վարձակալության լիզինգով 2017թ. ձեռք է բերվել USQ-82 մակնիշի 4 հատ տրակտոր և գյուղգործիքներ:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերից օգտվելու նպատակով հավաստագրման համար Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մարզային կառույցին են դիմել 525 ֆերմերներ:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես շարունակվել են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերը /գարնանացան սերմացուներ, պարարտանյութեր, դիզելային վառելիք/:

Համայնքների կողմից վճարվել և մարզ է ներկրվել.

գարնանացան գարի - 6.2 տոննա,
գարնանացան ցորեն - 1.2 տոննա,
առվույտ - 400 կգ,
ագոտական պարարտանյութ - 400 տ-ից վճարվել և հատկացվել է 346.2 տոննա,
ֆոսֆորական պարարտանյութ՝ 11.0 տոննա
կալիումական պարարտանյութ՝ 7.6 տոննա,
դիզ. վառելիք՝ 342 000 լ-ից վճարվել և հատկացվել է 135347 լիտր:

2017թ. մարզում պետական, միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների, մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 3 մլրդ. դրամի ներդրումներ /ջերմոցների, ինտենսիվ այգիների և մեքենատրակտորային կայանների հիմնում, ոռոգման համակարգի բարելավում, պտղի, հատապտղի մթերում, վերամշակում, հեռագնա սարամասերի ճանապարհների և ենթակառուցվածքների կառուցում և բարելավում, չրանոցների տրամադրում և այլն/:

Տեղական /Սպայկա/ և արտասահմանյան ներդրողների կողմից ուսումնասիրվում են Այրում համայնքի համապատասխանաբար Հաղթանակ /400 հա/ և Բագրատաշեն /300 հա/ գյուղերում հողատարածքներ, ձեռք բերելու՝ պտղատու ինտենսիվ այգիներ հիմնելու նպատակով:

Մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանը հորդորեց գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին որ տարվա սկզբին առաձին խորհրդակցություն անցկացվի 2018 թ. ծրագրերը քննարկելու նպատակով:

4. Մարզի առողջապահական հիմնարկների աուդիտի արդյունքների ամփոփում
Ձեկուցող՝ Ն. Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ

Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2017թ.-ի տարեկան ծրագիրը ընդգրկում է մարզային ենթակայության 50 տոկոսից ավելի պետական մասնակցության առողջապահական ՓԲԸ-ներ 4 և մարզային ենթակայության առողջապահական ՊՈԱԿ-ներ 11 միավոր: Բոլոր

միավորների համար կազմվել է աուդիտի հաշվետվություններ որոնց մեջ սխալների և բաց թողումների վերացման ուղղությամբ կատարվել են առաջարկություններ.

- չկատարել ծախսեր առանց նախահաշվում նախատեսելու և բացառել հաստատված նախահաշիվների նկատմամբ հողվածային գերաձախսերը, գրեթե բոլոր ՊՈԱԿ-ներում այս թերությունը հայտարարվել է, գերազանցվել է թե փաստացի, թե դրամարկղային ծախսերը
- ռիսկի գործոնները նվազեցնելու կապակցությամբ՝ վարձու աշխատողների աշխատավարձերի վճարումը իրականացնել բանկային քարտերի միջոցով
- նախահաշիվը կազմել ճիշտ և ժամանակին ներկայացնել հիմնադրի հաստատմանը
- գլոբալ բյուջեի փոփոխության ժամանակ նոր նախահաշիվ կազմել և ներկայացնել հիմնադրի հաստատմանը
- բացառել կրեդիտորական պարտավորությունների առաջացումը հարկեր
- գույքագրել և ճշտել գնված դեղորայքի մնացորդները
- հարկային տեսչության հետ պարբերաբար ճշտել հարկային պարտավորությունները
- ապահովել ներքին հսկողության և ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման, տնտեսող, օգտավետ գործառույթների առկայություն:

Վճարովի ծառայությունների մասով Իջևանի ԲԿ-ն 2015 թ-ի 62303 հազարի համեմատ 2016 թվականին ունեցել է 82404 հազար դրամի աճ (33 տոկոս):

Բերդի ԲԿ-ն 2015 թվականին ունեցել է 19035 հազար վճարովի ծառայություն, իսկ 2016-ին 21184 հազար:

Նոյեմբերյանի ԲԿ-ի 2015 թվականի վճարովի ծառայությունը կազմել է 43361 հազար 2016-ին 42250 հազար դրամ:

Իջևանի ԱԱՊԿ-ն 2015 թվականին ունեցել է 27189 հազար դրամի, իսկ 2016 թվականին 27064 հազար դրամի վճարովի ծառայություն:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն:

5. 2017թ. կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հետ տարվող աշխատանքների մասին

Ձեկուցող՝ Հ. Քոչարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ

2017թ. Տավուշի մարզում իրականացվել են որոշակի աշխատանքներ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ:

ԿԴԻԳ երեխաների հայտնաբերման, հաշվառման և նրանց հետագա խնդիրների լուծման աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու համար մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը մշտապես համագործակցում է համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, ուսումնական հաստատությունների, ոստիկանության անչափահասների գործերով խմբերի, ինչպես նաև մարզում գործող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող բոլոր պետական և ոչ պետական կառույցների հետ: Ներկայումս մարզում հաշվառված են կյանքի դժվարին իրավիճակներում

գտնվող 1163 երեխաներ, որի մեջ ներառվում են՝ հաշմանդամություն ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած, հաստատություններում գտնվող, խնամակալության հանձնված, հանրակրթությունից դուրս մնացած, խնամատար ընտանիքում գտնվող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և այլն:

2009թ. հանրապետությունում ներդրվել է ԿԴԻԳ երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգը, որտեղ մուտքագրվում են այդ երեխաների մասին անձնական տվյալներ: Հաշվետու տարում ևս շարունակվել են մուտքագրման աշխատանքները և համակարգ է մուտքագրվել 153 երեխա:

Ըստ կանոնադրության խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ առաջնորդվելով ՀՀ ընտանեկան և քաղաքացիական օրենսգրքերով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, իրականացնում են իրենց համայնքի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ապահովում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի կազմակերպման ու տեղավորման հետ կապված խնդիրների լուծումը, հանրակրթությունից դուրս մնացած երեխաների կրթական իրավունքի իրականացումը, ինչպես նաև իրականացնում են օրենքով սահմանված այլ գործառույթներ:

2017թ.ին մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հայտնաբերվել և մարզպետարան են ներկայացվել ութ առանց ծնողական խնամքի մնացած և երկու առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ: Նշված երեխաները բաժնի կողմից վերցվել են տարածքային հաշվառման և ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով:

Վերջին շրջանում հետևողական աշխատանքներ են տարվում երեխաների մուտքը հաստատություն կանխարգելելու, երեխային հնարավորինս կենսաբանական ընտանիքում պահելու ուղղությամբ: Կատարված աշխատանքների արդյունքում զգալիորեն նվազել են երեխաներին հաստատություն ընդունելու համար դիմած քաղաքացիների թիվը:

Այսպիսով՝ մանկատանը երեխային տեղավորելու համար դիմած ընտանիքի ընտանեկան պայմանների ուսումնասիրության արդյունքում մեկ երեխայի տրվել է եզրակացություն՝ Իջևանի "ՍՕՍ" մանկական գյուղում տեղավորելու համար: Ծնողների դիմումի հիման վրա 6 երեխաներ դուրս են գրվել մանկատանից:

Ներկայումս Իջևանի "ՍՕՍ" մանկական գյուղում փաստացի բնակվում է ԿԴԻԳ 80 երեխա, որից 30-ը՝ Տավուշի մարզից: Այս հաստատությունում երեխաների խնամքը իրականացվում է ընտանիքներում, որտեղ մոր և նրա օգնականի խնամքի տակ ապրում են 5-6 երեխա: Ինչպես ցանկացած ընտանիք, այստեղ նույնպես հետևում են, որ երեխաները լիարժեք սնվեն, ունենան բոլոր անհրաժեշտ իրերը, հաճախեն մանկապարտեզ կամ դպրոց, մասնագիտական խմբակներ՝ ըստ նախասիրությունների: "ՍՕՍ" մանկական գյուղում ապրող բոլոր երեխաները գտնվում են բաժնի մշտական ուշադրության կենտրոնում:

2017թ. ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների 6 երեխաներ տեղավորվել են բնակչության սոցիալական պաշտպանության Դիլիջանի խնամքի գիշերօթիկ հաստատությունում: Ընտանիքի կենսապայմանների բարելավման արդյունքում հաստատությունում գտնվող 7 երեխաներ վերադարձել են կենսաբանական ընտանիքներ: Ներկայումս հաստատությունում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքների 106 երեխաներ, որից՝ 79 ը՝ Տավուշի մարզից: Այնտեղ գործում է տասից ավելի խմբակներ երեխաների նախասիրություններին համապատասխան: Գիշերօթիկ հաստատությունը ունի

բազմամասնագիտական թիմ՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, բժիշկ, իրավաբան, մանկավարժ, դաստիարակներ: Բոլոր երեխաների հետ տարվում է հոգեբանամանկավարժական հետևողական աշխատանք:

<<Նույսի Կամուրջ>> ՀԿ Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի երեխայի զարգացման ցերեկային խնամքի կենտրոններում ընդգրկված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող շուրջ 628 երեխաներ՝ որոնց շրջանում իրականացվում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ և խորհրդատվություն: 2017թ. սեպտեմբերից կենտրոնների կողմից իրականացվում են մարզի բոլոր դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում և աջակցության տրամադրում:

2017-2018 թթ. ուսումնական տարվա նախաշեմին ուստիկանության անչափահասների բաժինների, քաղաքացիների կողմից հնչեցված ահազանգերից պարզվեց, որ հանրակրթությունից դուրս են մնացել վեց երեխաներ՝ չորս ընտանիքներից /Ենոքավան, Աչաջուր, Դեբեդավան համայնքներ/: Կատարված ուսումնասիրություններից հայտնի դարձավ, որ դպրոց չհաճախելու հիմնական պատճառը սոցիալական է. այն է՝ երեխաները չունեն հագուստ և գրենական պիտույքներ: Արագ արձագանքման արդյունքում անհատ ձեռներեցների և քաղաքացիների բարի կամքի դրսևորման շնորհիվ մարզպետարանում հավաքագրվեց կրթությունից դուրս մնացած երեխաների տարիքին համապատասխան հագուստ, կոշիկներ, գրենական պիտույքներ և այլ պարագաներ: <<Վորլդ Վիժն>> Հայաստան հասարակական կազմակերպությունը այս ընտանիքներին տրամադրեց տնտեսական և կենցաղային պարագաներ: Մարզպետի կողմից այս երեխաների ծնողներին իրենց դիմումի համաձայն ցուցաբերվեց դրամական աջակցություն: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերը նշված համայնքների պարտուսից դուրս մնացած բոլոր վեց երեխաները հաճախում են դպրոց:

Առաջարկվեց՝ որ այսուհետ ևս շարունակվեն բաժնի ակտիվ համագործակցությունը մարզում գործող բոլոր շահագրգիռ կառույցների հետ, որպեսզի կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների հիմնախնդիրները վեր հանվեն ժամանակին, գտնվեն մշտական ուշադրության տակ և այդ խնդիրներին տրվեն առավել արդյունավետ լուծումներ:

**6. ՀՀ Տավուշի մարզում 2017թ. ընթացքում կրթության ոլորտում իրականացված և 2018թ. իրականացվելիք ծրագրերի մասին
Ձեկուցող՝ Կ. Նազարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ**

2017թ. Տավուշի մարզում կրթության ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր՝ մասնավորապես իրականացվել է ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացը: 2017 թվականի ընթացքում 12 ուսուցիչ ստացել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

Կրթության որակին բարձրացմանն ուղղված ծրագրերից է մայրաքաղաքի առաջավոր հանրակրթական ուսումնական հաստատությունների /<<Այբ>> դպրոց, <<Քվանտ>>

վարժարան/ հետ հեռավար դասերի անցկացումը: Քանի որ մարզի հանրակրթական դպրոցներն ունեն լաբորատորիաների վերագինման կարիք, ուստի հեռավար դասերի ընթացքում կիրառվող փորձերը հնարավորություն են տալիս աշակերտներին որոշ չափով տեսական գիտելիքները լրացնել գործնականով:

Կրթության ոլորտում իրականացված հաջորդ ծրագիրը 2017-2018 ուսումնական տարում ձեռնարկատիրական տարրեր ինտեգրած փորձնական <<Տեխնոլոգիա>> առարկայի ներդրումն է մարզի բոլոր դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ դասարաններում, ինչպես նաև <<Ձեռնարկատիրություն>> առարկայի փորձնական ծրագիրը մարզի 26 դպրոցների 10-րդ դասարաններում անցնելը: Իսկ մարզի 3 դպրոցի 11-րդ դասարաններում 2017թ. սեպտեմբերից անցնում են <<Ձեռնարկատիրություն>> առարկային գործնական ծրագիրը: Ձեռնարկատիրական կրթության չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել 2016 թվականի N 1080 Կառավարության գործունեության ծրագիրը:

Մարզի 27 դպրոցում գործում է ուրբոտաշինության խմբակներ: <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության>> կողմից նման խմբակներ ունեցող դպրոցներին ի պահ տրամադրվել են համակարգչային տեխնիկա, ուրբոտաշինության համար նախատեսված ուսումնական և ավտոմատացման հավաքածուներ:

Ի կատարումն <<Նախագահի հանձնարարականի՝ մարզի սահմանամերձ համայնքների դպրոցների աշակերտները 2017 թ. սեպտեմբերին դասագրքերը ստացել են անվճար:

2017 թվականից մարզի բոլոր դպրոցներում ներդրվել է <<Կայուն դպրոցական սնունդ>> ազգային ծրագիրը:

2017թ.-ի սեպտեմբերից Տավուշի բոլոր դպրոցներում ներդրվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը: <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ի մարզային տարածքային կենտրոնները վերակազմավորվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: 2016թ. հուլիսից մինչև 2017թ.-ի դեկտեմբերը <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ն իրականացրել է <<Ապրել միասին, սովորել միասին. որակյալ ներառական կրթության երեխայի իրավունքը>> ծրագիրը <<Տավուշի մարզում: Ծրագրի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխաների որակյալ ներառական կրթության իրավունքը: Տավուշի մարզում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ճանապարհին ձեռք բերած արդյունքները և դեռևս առկա խնդիրները քննարկելու նպատակով ս/թ դեկտեմբերի 21-ին Դիլիջանում կազմակերպվեց ծրագրի ամփոփիչ համաժողովը: Ծրագիրն իրականացվել է Տավուշի մարզի բոլոր դպրոցներում, որի արդյունքում ներառական կրթության թեմաներով վերապատրաստվել է 2044 ուսուցիչ, 215 մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ: 1030 ծնողի շահերի պաշտպանության կարողությունների զարգացման արդյունքում ձևավորվել են 82 ծնողական փոխօգնության խմբեր: Վերջիններս հանդես են եկել երեխայի կրթական իրավունքի պաշտպանության նախաձեռնություններով դպրոցի և համայնքի մակարդակներում:

Տավուշի՝ համընդհանուր ներառական կրթության մոդելը հիմք է հանդիսացել մյուս մարզերի համար մշակելու նմանատիպ մոդել:

Ծրագրի գործընկերն է «Առաքելություն արևելք» դանիական մարդասիրական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը, իսկ ծրագրի հովանավորն է «Քաղաքացիական հասարակությունը հանուն զարգացման» կազմակերպությունը /CISU/:

2017թ. դեկտեմբերի 15-ին ավարտվել է օնլայն անցկացվող դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հայտագրման գործընթացը 7 առարկայից՝ ֆիզիկայից, մաթեմատիկայից, աշխարհագրությունից, քիմիայից, կենսաբանությունից, աստղագիտությունից և ինֆորմատիկայից:

2017-2018 ուսումնական տարվանից «Ազգային երգ ու պար» առարկայի փորձնական ծրագիրը ներդրել է Տավուշի մարզի հանրակրթական ծրագրեր իրականացնող 5 ուսումնական հաստատություններում՝ հջևանի թիվ 3 հիմնական դպրոցում, Նոյեմբերյանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, Դիլիջանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, Դիլիջանի թիվ 4 միջնակարգ դպրոցում, Բերդի թիվ 3 միջնակարգ դպրոցում: Նշված դպրոցներում «Ազգային երգ ու պար» առարկայի դասավանդումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի վերապատրաստած ուսուցիչների կողմից:

Կրթական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շրջանակներում՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» որոշման՝ Բերդի վարժարանը միացվել է Բերդի ավագ դպրոցին: Բերդի վարժարանի շենքը տիպային շենք չէր, այն հարմարեցված էր և Բերդի վարժարանի փոքրաթիվ աշակերտների հետագա ուսումնառությունը ավագ դպրոցում հնարավորություն կտա վերջիններիս ավելի լիարժեք կերպով իրականացնելու ուսումնառության գործընթացը: Վարժարանի գույքը Բերդի ավագ դպրոցին հանձնման գործընթացի առաջին փուլն ավարտվել է, համապատասխան փաստաթղթերը գտնվում են պետ.ոեգիստրում: Բերդի վարժարանի բոլոր ուսուցիչներն ապահովված են աշխատանքով:

2018թ. նախատեսվում է ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների թվի կրճատում: ՀՀ 2018թ.-ի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի ծախսերի բացատագրում նշվել էր, որ աշակերտների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների թվաքանակը կազմել է՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 7.5, 101-ից մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 9.5, 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 13.0՝ 2017 թվականի՝ համապատասխանաբար՝ 9-ի, 12-ի և 15.5-ի փոխարեն: Կապված ակնկալվող կրճատումների հետ՝ անհրաժեշտ է պահպանել ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» պահանջները:

2017թ. ընթացքում իրականացվել են նաև մի շարք մշակութային և սպորտային միջոցառումներ: ՀՀ կառավարության ծրագրում ներառված է եղել «Մշակութային

կազմակերպություն-դպրոց» արձանեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագիրը, որն իրականացվել է Երևանում՝ սահմանամերձ և սահմանապահ համայնքների հիմնական դպրոցների միջին դասարաններում սովորող աշակերտների (10-14 տարեկան) համար. երեք միջոցառում՝ մեկ ներկայացում, մեկ համերգային ծրագիր և մեկ թանգարանային այցելություն: Օրապահիկի և գիշերավարձի ծախսերը Երևան քաղաքում ֆինանսավորվել են ծրագրի շրջանակներում, իսկ տրանսպորտային ծախսերը մարզից Երևան և հակառակ ուղղությամբ հոգացել է մարզպետարանը:

2017 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կազմակերպվել և անց է կացվել պատմամշակութային վերածննդին նպաստող ավանդական «Մշակութային վերածնունդ» արհեստների և արվեստների համահայկական փառատոնը: Փառատոնն առանձնակի է իր ընդգրկվածությամբ՝ ներկայացված են ՀՀ մարզերը, Արցախը և սփյուռքը: Փառատոնին մասնակից են դառնում գորգագործ վարպետներ, ցուցադրվում են տարածաշրջանի կերպարվեստի, գորգարվեստի բացառիկ, նույնիսկ թանգարանային նմուշներ, ձեռարվեստի այլ ստեղծագործություններ՝ կավագործություն, խեցեգործություն, դարբնագործություն, փայտագործություն, ազգային խոհանոց և այլն:

Սեպտեմբերի 19-24-ը Տավուշի մարզի քաղաքներում և համայնքներում անցկացվել է «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների 12-րդ միջազգային ամենամյա փառատոնը, որին բացի հայկական թատրոններից մասնակցել են արտասահմանյան մի շարք երկրների տիկնիկային թատրոններ՝ հանդես գալով անվճար ներ Ս/թ. նոյեմբերի 24-ին Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի գեղարվեստի դպրոցում կայացավ ՀՀ Տավուշ աշխարհի հրաշեկ գույները» /ցուցահանդես-փառատոն/ խորագրով մշակութային միջոցառում: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է ցուցահանդես-փառատոն, անհատ կատարողների, մարզում գործող մշակութային կազմակերպությունների պարային և երաժշտական համույթների մասնակցությամբ համերգ, մարզի գեղարվեստի և արվեստի դպրոցների սաները նախապես ներկայացրել էին թեմային համապատասխան մեկական աշխատանք, այնուհետև տեղում անց է կացվել նկարչական մրցույթ: Միջոցառման մասնակիցներին խրախուսելու նպատակով տրվել է պատվոգրեր, շնորհակալագրեր, արժեքավոր նվերներ: կայացումներով:

Ս/թ. նոյեմբերի 24-ին Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի գեղարվեստի դպրոցում կայացավ ՀՀ Տավուշ աշխարհի հրաշեկ գույները» /ցուցահանդես-փառատոն/ խորագրով մշակութային միջոցառում: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է ցուցահանդես-փառատոն, անհատ կատարողների, մարզում գործող մշակութային կազմակերպությունների պարային և երաժշտական համույթների մասնակցությամբ համերգ, մարզի գեղարվեստի և արվեստի դպրոցների սաները նախապես ներկայացրել էին թեմային համապատասխան մեկական աշխատանք, այնուհետև տեղում անց է կացվել նկարչական մրցույթ: Միջոցառման մասնակիցներին խրախուսելու նպատակով տրվել է պատվոգրեր, շնորհակալագրեր, արժեքավոր նվերներ:

Տավուշի մարզից 14-25 տարեկան թվով 16 երգիչ-երաժիշտներ մասնակցել են Մոսկվայում կայացած «Արմյանսկի Կոլորիտ» փառատոնին, դրա շրջանակներում նոյեմբերի 12-ին տեղի ունեցած «Տաղանդավոր Տավուշ» խորագրով գալա-համերգին: Փառատոնը հովանավորել են Բերդի տարածաշրջանից սերված, Մոսկվայում բնակվող գործարարները: Փառատոնի կազմակերպիչները հոգացել են մասնակիցների՝ օդանավով Հայաստանից Մոսկվա մեկնելու և վերադարձի ծախսերը, ամեն մասնակցի 10 հազար ռուբլի հոնորար է տրվել: Իջևանի երաժշտական դպրոցի սաներից 3-ը փառատոնին մասնակցելու հրավեր են ստացել, նրանցից 2-ը՝ դաշնակահարուհի Նվարդ Ավետիսյանը (դասատու՝ Անուշ Մելիքսեթյան) և քանոնահարուհի Նելլի Բեգլարյանը (դասատու՝ Աիդա Սարգսյան) համերգին հաջողությամբ ելույթ են ունեցել, արժանացել պատվոգրերի, իսկ Իջևանի երաժշտական դպրոցը՝ շնորհակալագրի:

2017թ. կազմակերպվել է «Մարզական փառատոն» , որին մասնակցել են մարզի հինգ քաղաքների պատանի մարզիկները: Կազմակերպվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի ռազմամարզական խաղերը, որին մասնակցել են տարածքներում հաղթած երկուական թիմեր: Մարզային փուլում հաղթող ճանաչվեց Արծվաբերդի միջն. դպրոցի թիմը, որը մասնակցեց հանրապետական եզրափակիչ փուլին՝ գրավելով 1-ին տեղը: Կազմակերպվել է ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների մարզական խաղեր, Ազգային ժողովի գավաթի խաղարկություն, դպրոցականների շախմատի օլիմպիադա, ֆուտբոլի շրջանային և մարզային առաջնություններ ,ատլետիկայի գյուղական համայնքների սպարտակիադա, 8-ից 12-րդ դասարանների սպարտակիադա, նախազորակոչային և զորոկոչային տարիքի ռազմամարզական խաղեր, նախադպրոցական տարիքի երեխանների սպորտլանդիա, որոնց հաղթողները մասնակցեցին հանրապետական մրցումներին:

Մարզի սահմանամերձ դպրոցների աշակերտները ս/թ դեկտեմբերի 25-ին այցելել են ՀՀ նախագահի նստավայր՝ ամանորին նվիրված միջոցառմանը մասնակցելու համար:

2017թ. ընթացքում իրականացվել են նաև մի շարք սպորտային միջոցառումներ:

«Ազգային ժողովի գավաթի» մրցումների հանրապետական փուլը տեղի է ունեցել 2017թ. հոկտեմբերի 18-20-ը՝ Ծաղկաձորի սպորտ բազայում, որին մասնակցեցին Իջևանի թիվ 1, Իջևանի թիվ 4, Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցները:

Մարզում իրականացվել են ֆուտբոլի, շախմատի, միջհամայնքային և մարզային մրցաշարեր «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» խորագրով: Մարզում մեծ ուշադրություն է դարձվում հաշմանդամ մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակությանը: Մարզի 77 դպրոցներում, որտեղ իրականացվում է ներառական կրթություն, ուշադրություն է դարձվել հաշմանդամ երեխաների ֆիզկուլտուրայի դասերին մասնակցությանը, ուսուցիչներին տրվել է համապատասխան մեթոդական ցուցումներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները ընդգրկված են դպրոցականների շրջանում իրականացվող սպորտային միջոցառումներում:

Հուլիսի կամուրջ կազմակերպության կողմից նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը կազմակերպվել է «Սպորտ հանուն հավասար հնարավորությունների» սպորտախմբիկներ հջևան, Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան համայնքներում, որին մասնակցում են մարզի հաշմանդամություն ունեցող երեխաներ:

«Հ նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջների համաձայն կազմակերպվել է «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական բակ», «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» մրցույթ-ստուգատեսները:

«Հ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին, որը անցկացվեց Ծաղկաձորում մասնակցեց նաև Տավուշի մարզի թիմը:

Մարզպետարանը համագործակցում է « տարածքային կառավարման և զարգացման նախարարության, « սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, «Աշխատանքային ռեզերվներ» ընկերության, «Սևան» սպորտ-ընկերության, Հայաստանի Հանրապետության Ծախմատային ֆեդերացիայի, Հայաստանի Հանրապետության Ֆուտբոլի ֆեդերացիայի, ատլետիկայի ֆեդերացիայի, « Պաշտպանության նախարարության ռազմամարզական վարչության և մարզում գործող հանրապետական գործադիր մարմինների ստորաբաժանումների հետ:

Նոյեմբերյանի քաղաքապետարանի և Ստեփան Գիշյան հիմնադրամի միջոցներով վերանորոգվել է նոյեմբեյանի սպորտ դպրոցը:

Գանձաքարի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել ռազմահայրենասիրական միջոցառում, որին մասնակցել են զոհված ազատամարտիկների և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների անունով անվանակոչված դպրոցները:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն:

ՄԱՐԶՊԵՏ

Հ.ԱՐՈՎՅԱՆ

